«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 22.12.2015թ.ժամը 17.15

Համաձայն ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2015թ-ի ԿԴ2 /0114/04/13 որոշման՝Խաչատուր Անուշավանի Վարդանյանի սնանկության գործով կառավարչին ազատելու մասին Ալբերտ Հովհաննիսյանի բողոքի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար,ս/թ-ի Դեկտեմբերի 22-ին հրավիրված Կարգապահական հանձնաժողովի նիստ.

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը

«ՍԳԿԿ» ԻԿԿ Տնօրեն՝Անդրանիկ Ելինյանը
Քաղաքացի Խաչատուր Անուշավանի Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Եղյանը:
Բողոքաբեր՝Ալբերտ Հովհաննիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2015թ-ի ԿԴ2 /0114/04/13 որոշման՝Խաչատուր Անուշավանի Վարդանյանի սնանկության գործով կառավարչին ազատելու մասին Ալբերտ Հովհաննիսյանի բողոքի քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանին,ով նախորոք ներողություն խնդրեց ներկաներից նիստը նշանակված ժամից ուշ սկսելու համար և խնդրեց հանձնաժողովի անդամներից,որ այլևս հրավիրված նիստերից չուշանան և ապահովվեն իրենց ներկայությունը ժամանակին:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ստացված Դատարանի որոշումը,նրան կից բողոքաբերի բողոքը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Եղյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը և նշեց,որ ըստ էության ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2015թ-ի ԿԴ2 /0114/04/13 որոշմամբ պետք է քննվեր՝Խաչատուր Անուշավանի Վարդանյանի սնանկության գործով կառավարչին ազատելու,այսինքն լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,որը համաձայն «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի դատավորի լիազորություններն են և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ն կամ Կարգապահական Հանձնաժողովը այդ հարցի վերաբերյալ կարծիք կամ եզրակացություն տալու պարտականություններ չունի, ինչ վերաբերվում է որոշմանը հիմք հանդիսացող բողոքին,ապա բողոքում նշված դեպքերի և սնանկության գործով կառավարչի գործողություններում կարող են տեղ գտած լինել կարգապահական խախտումներ,որոնց քննման և վեր հանման համար անհրաժեշտ է հարուցել Կարգապահական վարույթ և քննել բողոքում առծածված հանգամանքները:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 3
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ –Քաղաքացի Խաչատուր Անուշավանի Վարդանյանի սնանկության գործով կառավարչ՝Հովհաննես Եղյանի նկատմամբ՝ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2015թ-ի ԿԴ2 /0114/04/13 որոշմանը կից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին ուղարկված քաղաքացի Ալբերտ Հովհաննիսյանի 26.11.2015թ-ի բողոքում առծածված հանգամանքներում, սնանկության գործով կառավարչի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման համար,հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանին,ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝
1.Լսել բողոքաբերին
2.Լսել սնանկության գործով կառավարչին
3.Ուսումնասիրել ներկայացվող փաստաթղթերը
Հանձնաժողովի անդամները,բողոքաբերը,սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին:
Համաձայն աշխատանքային կարգի Հանձնաժողովի Նախագահը ձայնի իրավունք տվեց բողոքաբեր՝ Ալբերտ Հովհաննիսյանին,ով իր բողոքը ներկայացնելուց առաջ ներկայացրեց պահանջ հանձնաժողովի նախագահին «Կարգապահական վարույթի անցկացման» ինտերնետային կայքից հանված Կարգը հաստատել և հետաձգել հանձնաժողովի նիստը քանի որ իր փաստաբանը հիվանդ է և չի կարողացել ներկա գտնվել այս նիստին և որ ինքը կարիք ունի իր փաստաբանին ներկայացնելու վերոգրյալ Կարգը,հետագայում ըստ դրա աշխատելու նպատակով:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը բողոքաբերին հայտնեց որ «Կարգապահական վարույթի անցկացման» Կարգը հաստատված «ՍԳԿԿ»ԻԿԿ 16.11.2013թ-ի ընդհանուր ժողովում և Կարգապահական Հանձնաժողովի նախագահը չունի այդ կարգը հաստատելու կամ վերահաստատելու լիազորություններ և հնարավորություն,իսկ ինչ վերաբերվում է նիստի հետաձգմանը բողոքաբերի փաստաբանի հետագայում ներկա գտնվելու պատճառաբանությունով,ապա պետք է նշվի,որ բողոքաբերը հանձնաժողովի նիստի հրավիրման մասին ծանուցվել է գրավոր և շուրջ չորս օր /ստանալուց հետո,մինչև նիստի օրը/ ուներ,իր փաստաբանի հետ խորհրդակցելու և նրա ներկայությունը ապահովվելու համար,ուստի այդ պատճառով Հանձնաժողովի նիստը հետաձգել նպատակահարման չէ:
Բողոքաբեր Ալբերտ Հովհաննիսյանը չհամաձայնեց հանձնաժողովի նախագահի հետ , բայց հանձնաժողովի անդամների կարծիքները լսելով ներկայացրեց իր բողոքի էությունը, մասնավորապես շեշտելով,որ սնանկության գործով կառավարիչ՝Հ.Եղյանը հաշվի չառնելով իր «պահանջը» և «գրավոր ուղղումը», գործում է «ինքնուրույն» «առանց իր հետ որևէ ճշտումներ կատարելու»,համագործակցում է կալանավայրից վերադարձաց պարտապան՝Խ.Վարդանյանի և նրա իամախոհների հետ,խախտելով «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի /ա/ ենթակետը,25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները,որի հետևանքով կորցրել է իմ «վստահությունը» իր նկատմամբ,որի հետևանքով էլ նա դիմել է դատարանին սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու համար:
Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց բողոքաբերի,այն մասին,թե բողոքաբերը ինչ նկատի ունի կառավարչի և պարտապանի «համագործակցություն» նշելով:
Բողոքաբերը պատասխանեց,որ սնանկության գործով կառավարիչը կատարում է այնպիսի գործողություններ,որոնք բերում են իր իրավունքների խախտմանը,մասնավորապես հայց է ներկայացրել դատարան գումարի պահանջով,որը առարկայական չէ,բայց պետք ներկայացներ բնակարանի առք ու վաճառքի պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին հայց և ավելին իր ներկայացրած հայցը ներկայացրել է ոչ այն դատարանին,որտեղ պետք է ներկայացներ,որի հետևանքով դատարանը չի ընդունել հայցը և վերադարձրել է,պատճառաբանելով,որ «Հայցը ներկայացված է քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի խախտմամբ»:
Բողոքաբերը ներկայացնելով վերոնշյալը մեկ անգամ ևս պահանջեց հանձնաժողովի նախագահից հաստատել «Կարգապահական վարույթի անցկացման» ինտերնետային կայքից հանված Կարգը,իր փաստաբանին ներկայացնելու համար,հակառակ դեպքում ինքը կլքի նիստը:

Ստանալով հանձնաժողովի նախագահի նույն պատասխանը ինքնակամ լքեց նիստի վայրը:
Բողոքաբերի նիստի վայրը լքելուց հետո հանձնաժողովի նախագահն առաջարկեց անցնել աշխատանքային կարգի երկրորդ մասին և ձայնի իրավունք տվեց՝սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանին:
Սնանկության գործով կառավարիչը ներկայացրեց սնանկության վարույթում կառավարչի կողմից, պահանջների բավարմանը ուղղված կատարված և կատարվելիք աշխատանքները, մասնավորապես կապված բողոքում հիշատակված քաղ.գործերի և պարտատիրոջ ու պարտապանի հետ «համագործակցելու» վերաբերյալ:
Կառավարիչը նշեց,որ տվյալ գործով ժամանակավոր կառավարիչ է նշանակվել 25.11.2013թ-ին վիճակահանության արդյունքում իսկ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել 08.01.2014թ-ին,նույնպես կայացած վիճակահանության արդյունքում,իսկ այդ ընթացքում պարտապանը ինչպես նաև բողոքաբերն է նշում գտնվել է կալանավայրում:
Կառավարչի կողմից պարտապանի և նրա ամուսնու գույքի հայտնաբերման նպատակով կատարվել են հարցումներ գրանցման լիազորություններ ունեցող պետական մարմինների,որտեղից ստացված պատասխաններից պարզվել է,որ պարտապանը չունի գույք և ակտիվներ,բայց ՀՀ ԱԳԿ պետական կոմիտեյից ստացված պատասխանից պարզվել է,որ պարտապանը 2011թ-ի Մայիսի 04-ին օտարել է ք.Երևան,Նոր Նորքի 4-րդ զանգված,2-րդ հատված,Հովհաննիսյան փող.9շ.25 բնակարանը- 15 355 000 ՀՀ դրամով,որտեղ պարտապանը հանդիսացել է համասեփականատեր:
Վերոգրյալ անշարժ գույքի վաճառքի օրվա դրությամբ շուկայական արժեքի որոշման համար դիմել եմ «Հաշվարկային պալատ»,որտեղից 23.04.2014թ-ին ստացված պատասխանից պարզվել է,որ անշարժ գույքի 04.05.2011թ-ի դրությամբ շուկայական արժեքը կարող էր կազմել `21500000 ՀՀ դրամ:
Վերոգրյալից հետո կառավարչի կողմից «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 54-րդ հոդված /Դ/ ենթակետի հիմքով կազմվել է վնասի փոխհատուցման /որովհետև առք ու վաճառքի պայմանագրի անվավերության հիմքեր չկային և նման լիազորություններ սնանկության գործով կառավարիչը չունի/ հայցադիմում և գույքի գտնվելու վայրով ներկայացվել է՝Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան:Դատարանը հայցադիմումը վարույթ չի ընդունել,քանի որ հաշվել է հայցադիմումը ներկայացված է ոչ ընդատյա դատարան:Կառավարչի կողմից 20.05.2014թ-ին արդեն պատասխանողի բնակության վայրով՝ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել համապատասխան հայցադիմում.որը դատարանի կողմից ընդունվել է վարույթ,քննվել է և 12.10.2015թ-ին կայացվել է՝թիվ ԿԴ1 0624/02/14 վճիռը,ըստ որի հայցը բավարարվել է մասնակի և պատասխանողից պետք է բռնագանձվի՝պակաս վճարված 107 000 ՀՀ դրամի 1/5 մասը՝21 400 ՀՀ դրամ:
Կառավարիչը նշեց նաև,որ վերոգրյալ դատավարությունը /27.05.2014թ-ից մինչև 12.10.2014թ./ այդքան երկարաձգվել է միայն բողոքաբեր Ալբերտ Հովհաննիսյանի և նրա Փաստաբան Ռևիկ Գևորգյանի տարբեր պատճառներով նիստերին չներկայանալու իրենց միջնորդություններով քաղ.գործի քննությունը այլ ուղղությունով տանելու նպատակ հետապնդելու պատճառով,բայց այն փաստը,որ բողոքաբերը և իր փաստաբանը մասնակցել են դատավարությանը՝ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի կարգավիճակով,դա փաստ և այն հանգամանքը,որ բողոքաբերը բողոքում է կառավարչից,թե սխալ հայց է ներկայացրել,իրենք այդ իրավունքը ունեին և կարող էին պաշտպանել իրենց իրավունքները ինքնուրույնաբար,որը և կատարել են, ավելին բողոքաբերի կողմից Վերքննության կարգով բողոք է տարվել վերոգրյալ վճռի դեմ,որը 27.11.2015թ-ին վերադարձվել է ՀՀ Վերաքննիչ դատարանի կողմից,խախտումների առկայության պատճառաբանությամբ,որոց վերացման դեպքում բողոքաբերը կարող է ներկայացնել բողոքը դատարանին:Այս պահի դրությամբ վերաքննիչ բողոքի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ կառավարիչը չունի:
Սնանկության գործով կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց վերոգրյալի վերաբերյալ փաստաթղթեր/Հարցումների,պատասխանների,որոշումների վճիռների,բողոքի,հայցադիմումի, արձանագրությունների լուսապատճենները-28 թերթ/

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ըստ աշխատակարգի ներկայացված փաստաթղթերը հանձնեց հանձնաժողովի անդամների և խնդրեց ուսումնասիրելուց հետո սկսել քննարկում ըստ էության:

Փաստաթղթերի ուսումնսիրությունից հետո ձայն խնդրեց հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյանը,ով մասնավորապես նշեց,որ ըստ էության սնանկության գործով կառավարիչ՝ Հ.Եղյանը,տվյալ սնանկության վարույթում կատարել է օրենքով սահմանված իր պարտականություններ և չի թերացել դրանց կատարման,ոչ մի կետում և բերված բողոքը ավելի շատ իր մեջ պարունակում է չփաստարված հայտարարություններ,որոնք հերքվում են կատրված աշխատանքի ներկայացումից հետո:

Մնացած անդամները համաձայնեցին Հ.Մարտիկյանի հետ:

Հանձնաժողովի Նախագահն հարցը դրեց քվերակության

ՔՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ – 3
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
1. Քաղաքացի Խաչատուր Անուշավանի Վարդանյանի սնանկության գործով կառավարչ՝ Հովհաննես Եղյանի նկատմամբ՝ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2015թ-ի ԿԴ2 /0114/04/13 որոշմանը կից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին ուղարկված քաղաքացի Ալբերտ Հովհաննիսյանի 26.11.2015թ-ի բողոքում առծածված հանգամանքներում, սնանկության գործով կառավարչ՝Հովհաննես Եղյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքերի, /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ,հարուցված Կարգապահական վարույթը կարճել:

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

3.Հաստատումից հետո եռօրյա ժամկետում սույն որոշման օրինակը ուղարկել կողմերին և ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝Է.Մեղրակյանին:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան

Նիստի մասնակից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ Տնօրեն՝Ա.Ելինյան